

1.— ՀՈՎԻՒՒՆ ԿՈՎԼԱԿԸ

(Գիւղական սյառկեր)

Ի՞նչ գեղեցիկ էր մեր գիւղին առաւօտը: Ծիծեռնակները մթնշաղին կ'ուետէին արշալոյսին բացումը: Թռչունները իրենց երամներով ծառերու վրայ ծաղկած՝ ճողիւններով օդը կը թնդացնէին: Մեր մամիկը առաւօտ կանուխ երեսը կը խաչակնքէր եւ եկեղեցւոյ կոշնակի ձայնին, աղօթքը բերնին մըթմըթալալ, ժամ կ'երթար: Հարսներ ու աղջիկներ կ'իկլացող առուէն կը շտապէին յատակ ջուր լեցնելու առաջնութիւնը շահիլ:

Քիչ յետոյ ամէն կողմէ հովիւին խիստ ու սուր ձայն էր, որ կը լսուէր, — «հայտէ՛, հայտէ՛...»:

Ամէն տան մէջ էծէները եւ հարսները դրազուած էին: Մէկը ոչխարը պիտի կթէր, միւսը դառնուկները իրենց մօր ոտքէն պիտի դատէր, վերջապէս ամէն տուն ետուզեռի մէջ էր, երբ թաղի հովիւ՝ Խենթ Սեքոյին ձայնը երկարէր:

Սեքօ էմմին հօտը կը քշէր կ'անցնէր, բնաւ ետեւը չէր նայեր: Ուշացած ոչխարներուն ու այծերուն հետ շատ խիստ կը վարուէր: Շատ բծախնդիր էր նաեւ ուտելիքին: Իր օրուայ պաշարը եղող կովլակին (1) համար: Վայ էր եկեր այն տանը, որ իր կովլակին մէջ, փիլաւէն, ձուածեղէն եւ քիւֆթէն զատ, որիէ ուրիշ չսիրած կերակուրը լեցնէր: Կամ պիտի թափէր եւ կամ այլ տան սրտականող առարկին զլուխը փորձանք մը պիտի բերէր:

Անդամ մը կովլակին կարգը էճելէննց կուլէկին էր: Մէկ հատիկ այծ մ'ունէր եւ շատ աղքատ էր, քիւֆթէ չէր կրնար շինել, որովհետեւ ցամաք հացի մը համար իր վեց սղտիկները իրար կ'անցնէին, ձուածեղ կամ հացով հաւկիթի անունը լսած էին միայն տղաքը: Իսկ կուլէկ անդամ մը հարուստի մը տունը կերեր էր: Թաղին երիտասարդները երբ եկեղեցւոյ աղբիւրին առաջ կը հաւաքուէին, այլ հարուստի տան մէջ կերած անուշեղէնին համար առասպելներ պատմել կու տային կուլէկին եւ կը զուարճանային:

— Սարդիս ախպէր, հէլէ պատմէ հայինք էտ օրը մենծ էծէն հացին արալըիր ձուածեղը տիլիմ էրաւ տէ քեզի տուաւ նը, իշտելի՞ր կերար:

— Իշտելի՞ր պիտ ուտե՞մ տղայ, առաջ չկիտցայ որ ձվածեղ է, փաթթէս կիտցայ, էտքը խածածիս պէս՝ եղբ ճրթ տէյր երեսս որ թուաւ նը, հայեցայ որ պաշխա պան է:

Այս պայմաններու տակ, խեղճ կուլէկը ստիպուած էր հովիւին կովլակի արանել ու լեցնել: Մերժել չէր ըլլար, ինքն ալ արժանապատուութիւն ունէր եւ թաղին դաստառայիններէն էր:

— Տղայ, ըսաւ կուլէկին կնիկը, էօ օր կովլակը Մոյամ Ապինց թո տան տէ, հէլպէթ շարթուան մէջ օր մէ մենք կ'առնինք:

— Տու շատ մի խօրաթեր, ըսաւ կուլէկ, առ, տունը ինչ որ կույ, բան մ'եփէ տէ մէջէն թող էլլէ:

Տունը ի՞նչ կար սր, միթէ կուլէկ չէ՞ր դիտեր. երկու դաթ անկողին, մէկը ինք ու նուրիկը կը պառկէին, խակ միւսին մէջ, մինչեւ բերանը լեի լեցուն իր դաւակները: Փայտէ օրբանին մէջ փոքրիկ Ազագարը: Հին 1-2 կտոր


(1) Փայտէ աման մը, դոյլի նման, ուտելիք լեցնելու յատուկ:




ՀԱՄԱԳԱՍՊ ՎՐԴ. ԵՂԻՍԻԵԱՆ
(Առաջնորդ Տրապիզոնի)



ՄԻՆԱՍ ՄԻՆԱՍԻԱՆ
(Տեսուչ էջմիածնի ձեմարանի)



ՕՐ. ԶՈՊԵԼ ԱՊՏԱԼԵԱՆ



ՏՕԲԹ. ՆԱԶԱԳԵՏ ԱՊՏԱԼԵԱՆ



ՏՕԲԹ. ՎԱՐԴԱՆ ԹՕՓԱԼԵԱՆ
(Տես, յօդուածը էջ 364)



ՏՕԲԹ. Գ. Մ. ԽԱՆԿԱՄԱՆԻՐ
(Տես, յօդուածը էջ 74)

խէսիբներ, հէնքին ծայրէն աւելցած նաշխուն կտորներով կտրկտուած երկու տոշակներ, մէկ հատ կաթսայ, լէկէն մը ու տապակ մը: Տանը անկիւնը խօրանան շալի տէղկեա՛ւ մը, եւ միւս անկիւնը սեւ ուլիկ մը ցնցոտիներու մէջ փաթթուած, որ նոր էր ծներ: Պատէն կախուած էր իր պաշտած շէշխանէ թիւֆէնկը: Մէկ ցից բացուն հայ եւ մէկ ցից ալ տաշկիր հայ, որ ընտանիքին մէկ շարթուան պաշարն էր, փայտէ սեղան մը, որուն տակը անցուած էր իր տիկը՝ (նուազի գործիք մը), որով հարսնիքի օրերուն առաջնութիւն շահած էր միշտ: Ահա այս էր կուլէկի ունեցած ամբողջ հարստութիւնը:

Այդ օրը Նունիկ շատ անհանդիստ էր: Պզտիկները ամէկ նողմէն պաշարած էին դիմքը ու կը հարցնէին, — Հարսօ, ջոպանին կովլակը ի՞նչ աղուր պիտի լեցնես: Խեղճ կինը շուարած էր, ի՞նչ պատասխան տար:

— Հէլէ կացէք հէմը ճանրմ, իմ տարսս ընծի հերիք է, հէլպէթ պան մը պիտի էփեմ, կ'ըսէր սրանեղած:

— Կնիկ, էկօ հայինք ինչո՞ւ դարէր տուիր, հարցուց կուլէկ կնկանը: Ի՞նչ կար, որ ինչո՞ւ որոշում տային: Երիկ կնիկ խելք խելքի տուին, շատ մտածեցին, վերջապէս Նունիկ աւետեց թէ, ալիւրի տոպրակին տակը կնտի համար օխայէ մը աւելի ալիւր կար:

— Շուտ ըրէք, ըսաւ կուլէկ, սա ախպորանցս տունէն քիչ մը սսպ փոխ առէք, եւ սսպով մալէղ մ'եփեցէք:

Մեծ աղջիկը ջուրին թասը առաւ շտապեց սսպը բերելու: Նունիկ ջուրը օճախին վրայ դրաւ, սսպը մաքրեց ու հոացած ջուրին մէջ լեցուց ու սկսաւ կերակուրի լեկէնին մէջ ալիւրին տօնճը դարնել: Պզտիկները հետաքրքրութեամբ կը նայէին, մէկը կոխեց իր դժալը ամանին մէջ, ուտելու համար:

— Մօ, շան լակոտ, էփած չէ կ'ըսեմ կօ նը, տահա ինչո՞ւ չես հասկընար, ըսաւ Նունիկ բարկացած ու թաց ձեռքով ապտակ մ'իջեցուց անոր երեսին:

Հետեւեալ առտու հովիւին առաջին ձայնին, Նունիկ ելաւ իր մէկ հատիկ այճը առջեւը ձգած, շտապեց դէպի հովիւը, դո՛հ սրտով կովլակը յանձնեց Սեքօ իմճու մեծ տղուն՝ Կանանչին ու վերագարծաւ տուն:

Ի՞նչ որ ալ ըլլար կովլակին մէջինը, ամօթ էր հովիւին կողմէն հարցնել թէ ի՞նչ էր դրուած: Սակայն Կանանչ եւ իր հայրը դիտէին թէ այդ օրուայ իրենց ուտելիքը պղտուրէ փելաւ էր, որովհետեւ փորձով գիտէին թէ ազքատ կամ միջակ ապրուստի տէր տնտօրները ամէնքն ալ փելաւ կը դնէին, հող չէր թէ մէկը քիչ մը իւղը շատ, միւսը քիչ կը դնէր, կամ ուրիշ մը սսպով կ'եփէր քանի մը կտոր սոխ միտսին, ստոր համար առարկութիւն ընել չէր արժեք ու ամօթ էր:

— Տղայ, Կանանչ, տա կովլակը պէր հայինք, հէլէ էսօր ստ պապուն մօրուքը վար անցած տղան ի՞նչ դրեք է:

— Իմմի, քիւֆթէ ու ձուածեղ է...

— Հա՛, էս խենթ կուլէկէն հետէտ պա՞ն կ'ելնէ, սսպով փելաւ է նէ, տէ պեր օր ուտենք:

Հայր ու տղայ կէսօրուայ ճաշի նստան պաղ աղբիւրին դուրսը իրենց մէջքին կասրած հացի ծրարները քակելով: Թոնիրի սպիտակ լաւաշները բացին, Կանանչ կովլակը բերաւ ու բացաւ. ի՞նչ մեծ անակնկալ, սկսաւ վեր զտակել ու բախտութեան:

— Իմմի', էմմի', մալէզ է, մալէզ...

— Վայ էա քու զոհողիդ... էփողիդ եւ այսպէս շարունակեց ու շիրցաւ բարկութիւնը զսպել. հրամայեց Կանանչին, որ Կոլէկին այծը գանէ, բերէ իր մօտ ու լեցնէ մալէզը այծին վրան ու ծեփէ ոսքէն մինչեւ կտոշները: Անմիջապէս կատրուեցաւ հրամանը:

Մարտ ամսու վերջերն էր: Գիւղին սղաքը ամէն իրիկուն հովիւին վերադարձին կը սպասէին ու կը դիմաւորէին զայն, այն յոյսով, թէ այդ օր իրենց դառնուկ մը եւ կամ ուլ պիտի բերէր: Շատեր արդէն իրենց յուսացածը ստացեր էին, իսկ շատեր օրերով գալիք գառնուկին ճամբան կը սպասէին: Այդ օր, աղայոց աղմուկը, պոռալու ու գուարճանալու ձեւը տարօրինակ կը թուէր, անոնց ձայնը թաղին ամէն անկիւն կը լսուէր:

— Հէ՛յ, հէ՛յ, Կոլէկին էծը հաեցէք, Կոլէկին էծը:

Լուրը հասաւ Կոլէկին ականջին. խեղճ կենդանին ծպտեալ վիճակով արդէն տուն հասեր էր:

— Քա, վա՛յ դիտուս, զոչեց Նունիկ, ձայն տալով էրկան, հէյ է կօտէ, սա էծուն հալը տե՛ս:

Կոլէկ վեր ցատկեց մէկէն իր աշխատած հորէն, երբ տեսաւ իրենց այծին վիճակը, արդէն ամէն ինչ հասկցած էր: Կոլէկ վերցուց քիթիւրայէն մնացած կտորած փետաին կոթը եւ ուղղուեցաւ դէպի ժամուն թաղը, Սեքօ էմմին բռնելու համար:

— Մի՛ թողուք, բռնեցէ՛ք, բռնեցէ՛ք... պոռաց Նունիկ փողոց վաղելով, սակայն այդ բարկութեան ժամանակով ո՞վ կրնար զսպել Կոլէկը: Հազիւ հասած՝ առաջին հարուածը իջեցուց հովիւին դիտուն, «Վա՛յ, էս քու...» ըսելով, բռնեց անօր վղէն ու խեղդելու առտիճան կը սեղմէր: Թաղին մարդիկն ի զուր աշխատեցան Կոլէկին ձեռքէն ազատել Սեքօ էմմին, որուն քթէն, բերնէն արիւն կը հոսէր:

Սակայն չկար Կանանչ: Ան ուշ էր մնացեր, իւրաքանչիւր տան ոչխար-խարներն ու գառները իրենց տիրոջ յանձնելու գործով զբաղուած: Երբ Կանանչ վրայ հասաւ ու տեսաւ իր հօր վիճակը, ի զուր փորձեց յարձակիլ Կոլէկի վրայ. գիտէր որ իր ուժէն վեր էր անօր հետ շափուիլը:

Կուս նայեցաւ կատղած, աչքերը լեռուն: Բայց ինք ինչ կրնար ընել. առաջին անգամ նման արարքի մը կը հանդիպէր: Սեքոն ու Կոլէկ իրարու ծանօթ մարդիկ էին, իր խելքը չէր հասներ պատահածին:

Չլացաւ սակայն: Աչքերը մնացին միշտ լեցուն:

2.— ԿԱՆԱՆՉԻՆ ՀԱՐՍՆԻՔԸ

Կոլէկին ու հովիւ Սեքօ էմմուն կոսէին ետք, տարիներ անցան յաջորդաբար: Խենթ Սեքօ ու իր տղան Կանանչ, իրենց հովուական ամենօրեայ կեանքը կ'սպրէին: Կարծես մարդկային շրջանակի մէջ մտնելը իրենց համար մեղք էր եւ ամօթ: Առաւօտ արեւէն տոաջ լեռը, իրիկուան արեւմուտէն յետոյ իրենց խցիկը եւ այս էր կեանքի բմբուսը իրենց համար:

Բայց ի՞նչ օգուտ... Օսմ. Սահմանադրութիւնը վրայ հասաւ եւ կարճ ժամանակ յետոյ սկսաւ նաեւ զօրահաւաքը: Կանանչը զինուորական տարիքի մէջ էր եւ առաջին շերտին կանչուելիք: Քաղաքական այս անտիկնալ լուրը

Սեքս էմմուն ականջը հասաւ թնդանօթի մը պայթիւնին շափ ուժեղ, ու ուղեղին մէջ զգաց ցնցում մը, որ օրէ օր կը ծանրանար ու կը ճնշէր իր ուսերուն, իր մաքին, իր երակներուն, նոյնիսկ իր հագած թաղիքէ ապային մէջ կը զգար այդ տնաքանդ լուրին սարսուռն ու ծանրակշիռ բեռը:

Կանաչ, թէեւ շատ բան չէր հասկնար անցողարձերէն, կ'ուզէր ճար ու ճարակ ըլլալ, իր հօր ցաւն ու մտահոգութիւնը փարատելու համար, բայց ի դո՛ւր:

Սեքս էմմուն համար Կանանչէն զրկուիլ կը նշանակէր իր օրուան հացէն զրկուիլ: Շատ մտածելէ վերջ որոշեց Միմոն Աղայի մօտ երթալ ու խորհուրդ հարցնել. ան խելացի մարդ էր եւ մանաւանդ կառավարութեան գործին խելք կրնար հասցնել:

— Ուրիշ ճամբայ չկայ, — ըսաւ Միմոն Աղան, — պէտք է տղադ դուրսէն ւսմունանցնես որ քեզի մօտին տան եւ զինուորութենէ աղափ. վերջը զղջալը օգուտ չընէր, շուտ շարժիր:

Այդ տարին մօտայի կարդ անցած էր զինուորութենէ ազատելու համար ամուսնանալը: Որբ աղջիկներու արժէքը շատ բարձր էր, իրարու ձեռքէ կը խլէին: Ատոնց կարգին էր նաեւ Կանանչը, որ հօրը ողջութեան պարտաւոր էր հատ մը զրափ պիւղերէն ճարելու:

— Ի՞նչ կօ կէնիս, Սեքս էմմի, Կենէնչը չե՞ս կօ կարգիս տահա, կը հարցնէին դրացիները:

— Ատ խենթ պապուն... տղան կնիկը ի՛նչ պիտ էնէ, ամա ես ատ թաղաւորին... կը պատասխանէր Սեքսն բարկացած:

Հովիւ Սեքսն 4-5 օր էր չէր երեւար: Մօտիկ Ղարաօար զիւզը դացծ էր: Մահլեցիք ամէնքն ալ դիտէին, որ վերադարձին Կանանչին համար հարսընցուն ալ միասին պիտի բերէր: Կանանչի ընկերները ամէն իրիկուն հօտին առաջը կ'ելլէին, կատակներ կ'ընէին եւ երբեմն ալ անոր ականջներէն կը քաշէին, որ իրենց ալ տէրտու դայ: Չ'ուշացաւ այդ օրը: Լուրը տարածուեցաւ ամէն տեղ, թէ Սեքսն իր հարսնցուն առած քաղաք է իջեր: Թաղի երիտասարդները ուրախութեամբ, ամէնքը մէկ մարդու պէս սուքի կեցան Կանանչի հարսնցուն դիմաւորելու:

Ու ահա սկսաւ հարսնեկան խրախճանքը: Հոն էր զուրնաճի Կոլլէկը, շուրկած պայթելու աստիճան ուռեցողցած տիկը՝ պարի եւ սիսի եղանակներ կը նուազէր: Կոլլէկի եւ Սեքս էմմուն միջեւ եղած միջադէպը մոռցուած էր եւ հաշտ էին իրարու հետ. այդ ապացուցանելու համար Կոլլէկ շատ աւելի եռանդ ու խանդ կը զնէր իր նուագին մէջ: Մինչ անդին ուրախութեան բաժակները Սեքսի եզրօր թոյօ էմմուն կենացը կը պարպուէին:

— Աչքդ լոյս, թոյօ էմմի:

— Աչքդ լուսով, ես լրում, տէրտու Սեթսին գլխը ըլլայ, զնամիշ էնողին տունը փլի, Աստուած աշխարհքիս ալ խաղաղութիւն տայ:

— Ամէն, ամէն:

Այս ամէն արարողութենէն վերջ, թոյօ էմմուն ձայնն էր որ լսուեցաւ.

— Եարաններ՛ր, Աստուած սիրողը թօ դա՛յ, հարս հանել պիտ երթանք: Կոլլէկի առաջնորդութեամբ հարսնետոբները ճամբայ ելան, երգելով, պարելով հասան Եաշտէփէ, ուր դիմաւորեցին Սեքս էմմին եւ իր հետեւորդները:

Հարսնցուն ձիու մը վրայ նստեցողցած էին եւ երեսն ալ ջօղով մը ծածկած: Սեքսի ուրախութիւնը անպատմելի էր իր ինամիներու առջեւ, որ

այսպէս մեծ բազմութիւն մը զինքը կը պատուէր: Հարսին երկու եղբայրները եւ հօրեղբորորդին եւ ուրիշներ միասին եկած էին պսակին ներկայ ըլլալու, ըստ սովորութեան: Սեքօ էմմուսն մտերիմները միացան իրեն, հայն ու խաթրը հարցնելու համար:

— Է, Սեքօ էմմի, խօրաթէ հայինք, ի՞նչ տեսիլք էս, օրի՞հէտէս ուշացար. պարէ կիր մը թօ կրեկ տայիր աէ մեհք կտոր մը կռահթէինք:

— Տղա, մի խօրաթեր, հետէս պա՞ն մը կ'ըլլայ. լէշտերը քըշտէիր նը, կաթ մը էրինս կօ չէր ելլեր. ալոյս, աս Ղարասանցոց մէջը խօսք հասկցող մէկ մը չկայ քի պան մ'ըսե, պան մը հասկնաս. ինչէնը, փառք Աստըծու, էսէ մէջէն հանեցինք...

Հարսնեւորներու ուրախութիւնը կատարեալ էր: Թափօրը հասաւ Սեքոյի տան դրան առաջ: Հարսներ, ազնիւիներ տանիքներէն հարսնցուն կը դիտէին: Մանուկներ հարսին բոլորաթիքը շրջանակ կազմած էին եւ ահա տանիքէն սէնիյով լէպլէպու եւ շաքար թափեցին հարսի գլխուն, մինչ միւս կողմը երիտասարդները անհամբեր կը սպասէին կարմիր խնձորին, որ սովորութիւն էր նետել տալ հարսին ձեռքովը հարսնեւորներու բազմութեան մէջ: Այդ կարմիր խնձորը մեծ նշանակութիւն ունէր երիտասարդներու համար: Ով որ ձեռք ձգէր դայն, բազդաւոր կը համարուէր:

Կարգը եկած էր փեսային պատրաստութեան, որը ըստ սովորութեան միշտ տեղի կ'ունենար, պիտի լողցնէին ժողովուրդին առջեւ: Այո՛, ամէն Կիւրիցի նոր փեսայի պարաքն էր: Թէեւ օրէնքով հարսը չբերած կը լողցնէին փեսան, սակայն պարազան այնպէս եղաւ որ վերջը ըլլայ այս արարողութիւնը: Պարտէզին մէջտեղ երկու ցղինձ ջուր մինչեւ բերանը լեցուն կը տաքնար եւ խոշոր տէջօն մը դետնին վրայ դրուած փեսային կը սպասէր:

Փեսին ընկերները մօտեցան իրեն եւ ուզեցին հաղուստները հանել, որդէպի լողցնեն, որ թաղաւորի դէստը հաղցնելով պսակի երթայ: Սակայն մեծ անակնկալ մ'եղաւ երբ լուր տարածուեցաւ թէ Կանանչը չ'ուզեր ամուսնաւը: Կանանչը կը մերժէր իր բոլոր ընկերները եւ հանդիսականները, անդրդուելի մնալով իր օրոշումին մէջ.

— Ես զինուոր պիտ երթամ, ես փեսայ չեմ ըլլար, ես չեմ ուզեր ամուսնանալ, կը կրկնէր նոր Փեսան:

Օգուտ չըրաւ բոլոր աղաչանքներն ու համոզիչ խօսքերը: Կանանչի չեմը չեմ էր: Անիկա լերան ամայի կեանքին վարժուած եւ հոն հասի նետած էր. ինքը՛, շունը՛ դամբօր եւ հօտը, այս էր եղած իր շրջանակը: Հարսանեկան այս անմիջական կարգադրութիւններէն քիչ բան էր հասկցած ու չկրցաւ հաշտուիլ ամուսնանալու իրականութիւն դարձած ծրագրին հետ ու մերժեց:

— Չե՛մ ամուսնանար, ես փեսայ չե՛մ ըլլար, թող ինձ զինուոր տանին, կ'երթամ, զինուոր կ'ըլլամ:

Հարսնեւորներուն մէջ շշուկները շատցան: Մենձ էձէները իրարու ահանջի կը փոփոսային. — Վայ կլխում, հէտէս պա՞ն մը կ'ըլլայ. դա՛վալլու հարսը ում կրի պիտի հանեն. պարէ թօ չպերէին. մեղի առ նամուս չկա՞յ:

Այս իրարանցումին մէջ յանկարծ խենթ Սեքոյի ձայնը լսուեցաւ.

— Տղա՛ք, Աստուած սիրողը թող քշտէ սատկեցնէ, ալ ինձի հէտէս էլլաս պէտքութիւն չունի:

Քանի մը տաք զլուխ երիտասարդներ փեսայի այս անսպասելի վարմունքէն սրտնեղած սկսան անոր գլխին բռունցքի հարուածներ տեղալ անխնայ,

քաջալերուելով հօրը՝ Սեքօ էմմուսն հրամանէն: Փեսան նեղ դրութեան մէջ էր, գիտէր ու կը հասկնար հօրը բարկութիւնը, ուրիշ ճամբայ չկար, պէտք էր հնազանդիլ:

— Ամա՛ն, ոտքերնիդ պոպնիմ, հերիք է, ի՞նչ կօ կ'ըսէք նը հետէտ թօ ըլլայ... կահազեց Կանանչ, գլուխը կորսնցուցած ու արցունքոտ աչքերով:

Թոյօ էմմին սլատահածին սկանառես, մէջ նետուեցաւ պոռալով.— Է՛ հավրում, հերիք է, մէրէմնիդ ի՞նչ է քի տղան էտղոար ծեծէք կօ, պիտ մեռցընի՞ք ի՞նչ պիտի ընէք. կը կարգուիմ կ'ըսէ կօ նր, տահա ի՞նչ կօ կ'ուղէք:

Ժողովուրդը հանդարտեցաւ. Կանանչ իր հաւանութիւնը յայտնեց ու տրամադրուեցաւ թաղաւոր ըլլալու պատրաստութեան: Երիտասարդութիւնը շրջանակ մը կազմեց փեսին շուրջը որուն հազուատները հանած սկսան լողցնել ուրախութեամբ երգելով.

Ղալանքն պաշընտա էֆերլէր տառը,
էֆերլէր, պիչերլէր, էտերլէր ֆեարը:
Տօթ իջիւն սագլարլար հայվայը, մառը,
էօյլ օլուր պէյլ օլուր պլագը կիւգէլիմ,
Ճիվէտի քօյս օլուր պագը կիւգէլիմ...

Թաղաւորը հազուած պատրաստ էր արդէն. զինք տարին հօր ու մօր ձեռքը համբուրել տալու: Սեքօ էմմին դեռ չէր հանդարտած բարկութենէն, — Հետէտ էվլատ պէտքութիւն չունի ինծի, կը կրկնէր, քանի որ առ նամուսի վրայ խօսելիք բան էր Կանանչի ըրածը: Սակայն ներքին դահուանակութեան զգացումէն տարուած հաշտուեցաւ ներող ըլլալ իր զաւկին: Իր կեանքին մէջ ամենաներջանիկ օրն էր այդ, տեսնելով իր մարդհասակ տղուն ամուսնութիւնը: Հօր մը դուրսդուրանքովը համբուրեց իր զաւակը եւ հարսնետորները ուղղուեցան դէպի թաղին եկեղեցին:

Ծերուկ քահանան օրհնեց անոնց պսակը ու ըսաւ իր վերջին խօսքը «Զոր Աստուած զօգեաց մարդ մի մեկնեսցէ»:

Թրքական ցաւազար քաղաքականութիւնը առօրեայ ալեծուսի շրջան մը կ'ացընէր: Կառավարութեան պաշտօնական յայտարարութիւններն ու ձեռք առնուած կեղծ ու պատիր միջոցները կանխատեսել կու տային, մօտալուտ ամպերու հուտակումը, որ գիշատիչ սեւ անդղի մը լայն թևերով պոռյա կու տար ու վայրի խոյանքով մը կը սարսուտար Կիւրիինի Հայութեան կեանքին ու դոյութեան...

Այսպիսի շրջանին, Կանանչը մէկն էր այն բազմաթիւ հայ նորահաս ու կորովի երիտասարդներէն, որոնք հարկադրուած էին կապել իրենց սիրտն ու հոյին կեանքի ընկերոջ մը հետ՝ երեւութապէս ի գործ դնելով, Կիւրիինի հարսանեկան այնքան ճոխ, չէն ու հարուստ խրախճանքներու եւ վայելքներու պատկանական սովորոյթը:

Կանանչը մէկն էր վերջապէս, կեանքի ասպարէզ նետուող այն բազմաթիւ նորաստակ ամուսններէն, որոնց ընտանեկան նորաչէն թոյնին բախտաւորութիւնը, աւա՛ղ, շատ կարճատեւ եղաւ...

Կանանչի հարսնիքի դրոյցը դեռ չէր մոռցուած, երբ արդէն խումը խումը Հայ երիտասարդներ թրքական դրօշակին տակ զինուորական շարքով կը մեկնէին դէպի Սերաստիա, բաժնուելով իրենց սիրելիներէն, թերեւս երբեք չվերադառնալու համար:

Կանանչը անոնց մէջ էր:

Հալէպ

Ս. ՊՈԶՂՈՒՐՏԵԱՆ

ՔԱՐԷ ՄԱՆՈՒԿ

... Քարէ Մանուկ, քար կ'ըրիմ:

... Մեղքը չիլիս:

... Սըկից տըտէ(1) չեթամ:

Այս էր երգում ընելու բառերն ու ձեւը մանուկ հասակի տղոց, եւ շատ անգամ կին մարդոց խօսակցութիւններուն մէջ: Հաւանօրէն պղտիկները սուրված են զանոնք մեծերէն:

Դպրոցին մէջ յաճախ կը դործածուէր երբ դերք մը կամ մատիտ մը առնել վերագարձնելու խոստում մը պիտի ըլլար երկուքի միջեւ:

— Ի՞նչ կայ, քիչ մը դերքը տուր բան մը նայիմ տամ:

— Չե՞ս տար:

— Կու տամ, մեղքը չիլիս, կու տամ, քարէ Մանուկ քար կ'ըլիմ, կու տամ, սըկից տըտէ չեթամ, կու տամ:

— Քա տղայ, հացին փշուրը մի վաթիւր կոխկրտիր, քարէ Մանուկ քար կ'ըլիս, կ'ըսէին նաեւ մայրեր, երբ անդպուշտութեամբ հաց իփշրանք թափէին գետին: Հաւերը արդէն չէին թողուր, որ ոտքի կոխան կ'ըլլան, բայց սովորութիւն եղած էր ...քար կ'ըլլիս մի վաթիւր» ըսելը:

Կը յիշեմ, էծէս քանիցս իր հէքիաթներու շարքին պատմած էր Քարէ Մանուկի աւանդական առաստիւլը, ինչ որ իմ հասկացողութիւններուս ու մտքիս մէջ դեռ տեղ դրաւած էր ու դեռ կը մնայ...

— «Էլիլը ժամանակը»... կը պատմէր ընկերս, «էրիկ մը կնիկ մը կան եղեր, ջաղաց մը կ'ունենան: Էս էրիկն ու կնիկը հնդտար աղքատ են եղեր, որ տուններին շորի կտոր մը պիլէ չկայ եղեր, օր մը կնիկը լեպէշ էփած ատեն ջաղան վրան կ'աղստէ, էրիկն ալ տուն կու դայ: Կնիկը սաղին կը հայլ, էնդին կը հայլ ջափութի կտոր մը շի կտնեք, համան լեպշ մը կ'առնէ ու ջաղացին տակը կը սրիէ: Աստուած Տեռէն կը տեսնէ էս շար կնիկան ըրածը, կը բարկանայ, կը պոռայ ու կ'ըսէ որ լերան վրայ իհան(2) քար կ'ըլին»...

Չարմացած աչքերով, մտիկ կ'ընէինք բոլորս ալ:

— «Էս էրիկն ու կնիկը... կը շարունակէ էծէն... «Ջաղանին կ'առնեն, հացին տախտակն ու օխջաղուն է հետերինն դուրս կ'ելլեն կ'երթան լեռը: Լեռը որ կը հասնին, ալայով քար կը կ'ըլին, կը մնան»:

Կուռնայ չուկայէն Նաշ Տեփէ երթալու ճամբուն վրայ Ծարման Մահլէի մօտերը բլուրի մը կողքին բարձր եւ սրածայր ժայռ մը կար ցցուած, որուն դապաթը քիչ մը նմանութիւն ունէր մարդու երկու գլուխներու, իսկ

1) Ասկէ աճդիմ: 2) Երբամ: